ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«11» նոյեմբերի 2016 թ. № 226-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N204-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N224-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 12-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 20-ի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհուրդ ստեղծելու մասին» N204-Ա հրամանով ստեղծված Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
2016 թվականի Հոկտեմբերի 11-ի
N 226-Ա հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N204-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 20-ի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհուրդ ստեղծելու մասին» N204-Ա հրամանով ստեղծված եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) գործունեության կարգը:

2. Խորհուրդը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին կից խորհրդակցական մարմին է, որն իրականացնում է հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումներին առնչվող քննարկումներ և առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

3. Խորհրդի նպատակն է պետական և մասնավոր հատվածների միջև արդյունավետ երկխոսության միջոցով բարելավել և ընդլայնել հարկ վճարողների մասնակցությունը հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների իրականացման գործընթացին:

4. Խորհրդի գործունեության կազմակերպական և մեթոդաբանական աշխատանքները կատարվում են Խորհրդի քարտուղարության կողմից (այսուհետ՝ Քարտուղարություն), որի գործունեության կանոնակարգը հաստատվում է Խորհրդի կողմից:

2. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

5. Խորհրդի գործունեության հիմնական սկզբունքներն են՝

1) քաղաքական չեզոքություն,

2) գործողությունների թափանցիկություն,

3) փոխհամաձայնություն,

4) տարբեր տեսակետների նկատմամբ հարգանք և գնահատում,

5) բազմակարծություն:

3. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Խորհրդի գործառույթներն են՝

1) հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների իրականացման առաջնահերթությունների քննարկում և առաջարկությունների ներկայացում,

2) Խորհրդի անդամների և Քարտուղարության կողմից ներկայացված՝ հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումներին վերաբերող արդիական խնդիրների և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների քննարկում և համապատասխան որոշումների կայացում,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և պետական կառավարման այլ մարմինների կողմից մշակված՝ հարկային ու մաքսային օրենսդրության և հարկային ու մաքսային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքների, առաջարկությունների և տեսակետների ներկայացում ու քննարկում,

4) հարկային ու մաքսային օրենսդրության և հարկային ու մաքսային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի միասնական կիրարկմանը և մեկնաբանությանը վերաբերող հարցերի քննարկում,

5) հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումներին աջակցելու համար համապատասխան ուսումնասիրությունների, վերլուծությունների և հետազոտությունների կազմակերպում,

6) հարկային և մաքսային վարչարարության բարելավման օժանդակություն:

4. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ ուշ, քան յուրաքանչյուր ամսվա ընթացքում մեկ անգամ: Խորհրդի նիստերը կարող են գումարվել Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ Խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

8. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

9. Խորհրդի որոշումներն ընդունվում են փոխհամաձայնությամբ, իսկ դրա բացակայության դեպքում՝ նիստին մասնակից Խորհրդի անդամների ձայների 2/3-ով:

10. Խորհրդի անդամը, որը համաձայն չէ Խորհրդի ընդունած որոշման հետ, կարող է գրավոր ձևով ներկայացնել իր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը:

11. Խորհրդի նիստի կազմակերպման մասին տեղեկատվությունը Խորհրդի անդամներին և հրավիրվող անձանց ուղարկվում է նիստից առնվազն 5 աշխատանքային օր առաջ, բացառությամբ հրատապ հարցերի և խնդիրների լուծման նպատակով հրավիրվող նիստերի:

12. Խորհրդի նիստի օրակարգի հարցերի ձևավորման առաջարկությունները Քարտուղարությանն են ուղարկվում նիստից առնվազն 10 աշխատանքային օր առաջ: Խորհրդի նիստի օրակարգը տրամադրվում է Խորհրդի անդամներին և հրավիրված անձանց նիստից առնվազն 3 աշխատանքային օր առաջ, բացառությամբ հրատապ հարցերի և խնդիրների լուծման նպատակով հրավիրվող նիստերի:

13. Խորհրդի աշխատանքներին, ըստ անհրաժեշտության, հրավիրվում են պետական կառավարման մարմինների և գործարար համայնքի ներկայացուցիչներ, փորձագետներ, ինչպես նաև այլ շահառու խմբերի ներկայացուցիչներ:

14. Խորհրդի յուրաքանչյուր նիստ սկսվում է օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին զեկուցմամբ:

15. Հարցի քննարկման ընթացքում Խորհրդի անդամների կողմից նոր առաջարկներ ներկայացնելու կամ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հարցի քննարկումը տեղափոխվում է հաջորդ նիստ:

16. Խորհրդի նիստերն արձանագրվում են Քարտուղարության կողմից: Արձանագրության մեջ ամրագրվում են օրակարգում ընդգրկված հարցերը, մասնակիցների ելույթները, ինչպես նաև մշակված առաջարկությունները կամ լուծումները: Նիստերի արձանագրությունները

նիստերի անցկացման օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

17. Խորհուրդը կարող է ստեղծել աշխատանքային խմբեր:

5. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

18. Խորհրդի նախագահը՝

1) վարում է Խորհրդի նիստերը,

2) իր բացակայության դեպքում Խորհրդի անդամներից մեկին հանձնարարում է վարել Խորհրդի նիստերը,

3) հանձնարարականներ է տալիս Քարտուղարությանը,

4) ներկայացնում է Խորհուրդը Հայաստանի Հանրապետության կառավարությունում կամ այլ կազմակերպություններում կամ Խորհրդի անդամներին հանձնարարում է խնդիրները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությունում կամ միջազգային կազմակերպությունների հետ իրականացնել քննարկումներ:

6. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

19. Խորհրդի անդամ կարող են հանդիսանալ մասնավոր հատվածի շահերը ներկայացնող հասարակական կառույցների ներկայացուցիչները, ինչպես նաև միջազգային խորհրդատվական կառույցների ներկայացուցիչները: Վերջիններս խորհրդի նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով: Խորհրդի կազմում ընդգրկվելը և դուրս գալն իրականացվում է համապատասխան կառույցի դիմումի հիման վրա:

20. Խորհրդի անդամն իրավունք ունի Քարտուղարության միջոցով Խորհրդի քննարկմանը ներկայացնել հարցեր, ինչպես նաև առաջարկություններ և կարծիքներ:

7. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

21. Խորհրդի գործունեության կազմակերպական և մեթոդաբանական աշխատանքները կատարվում են Քարտուղարության կողմից:

22. Քարտուղարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչությունն է: